

## ԳՐԱԽՕՍԱԿԱՆ

## «ԵՐՈՒԱՆԴ ՕՏԵԱՆ»

Հեղինակ՝ Դոկտ. Ս. Մանուկեան  
Հրատ. Հովանաւոր՝ Յարութիւն Սիմոնեան

«Եւ սակայն ճակատագրօրէն վնասուած էր կարծես, որ գրականութիւնը պիտի ըլլար կեանքիս միակ գրադումը»:

Ե. Օտեան

Հետաքրքրութեամբ կարդացի եւ քաւականութեան զգացումով փակեցի քանասիրական Դիտ. Դոկտ. Սարիբէկ Մանուկեանի «Երուանդ Օտեան» մեմագրութիւնը, որի հրատարակութիւնը զուգահիշում է հեղինակի ծննդեան 80-ամեակին:

Սարիբէկ Արմենակի Մանուկեան: Հայ Գրականագէտ ծնուած է 1917ին Երեսնում: 1945ին աւարտել է երեսնի պետական համալսարանի Հայ քանասիրութեան բաժինը: 1949ին Դիտական աշխատող է Հայաստանի ԳԱ-ի Մանուկ Աբեղեանի անուան Գրականութեան ինստիտուտում: Աշխատասիրել է հրատարակել է առանձին գրքերով «Գեղամ Սարեան» (1954), «Ժողովուրդներու բարեկամութեան արտացոլումը Սովետահայ Գրականութեան մէջ» (1956), «Սովետահայ Գրականութեան տարեգրութիւն» հեղինակիցներ՝ Յ. Ղազարեան եւ Ալ. Զաքարեան (1957), «Վահան Թոթովենց» (1959), «Պերն Պոշեան (1984), «Լեւոն Բաշալեան» (1969), «Յակոբ Յակոբեան» (1975) Մեմագրութիւնները: Մասնակցել է «Հայ Գրականութեան Պատմութիւն» (Հատոր 1-5, 1962-1979), Պետական մրցանակի արժանացած մեծածաւալ աշխատութեան ստեղծմանը, գրելով «Արսէն Բագրատունի», «Ամբատ Շահագիզ», «Լեւոն Բաշալեան» «Վահան Թոթովենց», «Երուանդ Օտեան», «Գ. Սեւունց» գլուխները:

Կենսագրական համառօտ այս տուեալների մէջ իսկ երեւում է, որ «Ե. Օտեան» աշխատութիւնը յենում է կէսդարեայ գիտական պրպտումների, կուտակած փորձի, հմտութեան եւ աւելի քան մէկ տասնեակ մեմագրութիւնների ամուր հիմքի վրայ: Այն ունի 360 էջ ընդհանուր ծաւալ, քաժանուած չորս գլուխների: Բացի այդ, ընդհանուր ծաւալի մէջ են մտնում նաեւ «Խօսք հովանաւորի», «Հեղինակի կողմից», «Երկու Խօսք որպէս վերջաբան» կարճառոտ Գրութիւնները եւ իւրաքանչիւր Գլխի վերջում տրուած «ծանօթագրութիւնները»:

Մեմագրութեան մասին ըստ էութեան խօսելուց առաջ, անհրաժեշտ է պարզել հեղինակի ծրագիրը, այսինքն՝ որոշակի իմանալ, թէ նա այդ ծով նիւթից ի՞նչ թեմաներ է առանձնացրել ուսումնասիրելու համար, եւ նիւթի մատուցման ի՞նչ եղանակ է ըտնրել: Պարզաբանումը կարելի է մանաւանդ նրա համար, որ գրքի ու նրա հեղինակի համար թերի կամ պակաս չհամարենք այն ամէնը, ինչը նա չի նախատեսել ուսումնասիրութեան իր ծրագրում:

Այս մասին մեմագրութեան հեղինակը տուել է յստակ կողմորոշող ցուցմունք. «Նպատակ չեմ ունեցել եւ մէկ աշխատութեան մէջ հնարաւոր էլ չէր հանգամանօրէն անդրադառնալ քաղաքեղուն գրողի գործունէութեան եւ երգիծանքի

առանձնայատկությունների բոլոր կողմերին: Իմ հիմնական նպատակն ու առաջնահերթ խնդիրն է եղել նորովի ընթերցել և գիտական անաչառությամբ ֆննել ու գնահատել Ե. Օտեանի Գերագանցօրէն Գեղարուեստական վաստակը, ի հարկէ առանց անտեսելու հրապարակախօսութիւնը, յուշագրութիւնը, լրագրական աշխատանքը և այլն: Առանձին բաժին չի յատկացուել գրողի կենսագրութեանը, որը սակայն, անհրաժեշտ չափով շարադրուել է նրա ստեղծագործական Գործունէութեան տարբեր փուլերին նուիրուած հատուածներում: Առանձնացուած չէ նաեւ Ե. Օտեանին վերաբերող բաւականին բազմազան և հարուստ Գրականութեան ֆննութիւնը, ինչպէս ասում են Օտեանագիտութեան տեսութիւնը: Յատուկ ֆննութեան չեն առնուած Օտեանական երգիծական արուեստը, սակայն այն ըստ հարկի ցոյց է տրուած այս կամ այն ստեղծագործութեան վերլուծութեան ընթացքում:

Աշխատութիւնը անքերի և սպառիչ լինելու յաւակնութիւնը չունի: Հեղինակը ձգտել է գիտականօրէն հաստատել ու հիմնադրել այն նշնարտութիւնը, որ «անգուգական վարպետ Յակոբ Պարոնեանի արժանի ու տակաւին չգերագանցուած յաջորդը եղաւ Ե. Օտեանը», իր խօսքը եզրափակում է Գրականագէտը:

Հետեւում է, որ «Ե. Օտեան» մեծագրութեան ծրագիրն ու նպատակը եղել է նորովի ընթերցել և գիտական անաչառությամբ ֆննել-գնահատել Ե. Օտեանի գրական-գեղարուեստական վաստակը, իսկ կենսագրութեանը, հրապարակախօսութեանը, յուշագրութեանը, նրա վիպագրութեան ու երգիծանքի գեղագիտութեանը, ինչպէս նաեւ Օտեանագիտութեան տեսութեանը նա չի յատկացնում առանձին բաժիններ, դրանք չի ֆննում որպէս առանձին թեմաներ, այլ ըստ տեղի և անհրաժեշտութեան, դրանց

անդրադառնում է Օտեանի գլխաւոր գեղարուեստական գործերի վերլուծութեան ժամանակ, Սիւժէ-գաղափար, արուեստ և ժամանակ միասնութեան մէջ:

Շատ կարեւոր է նկատի ունենալ, որ այս տողերն ու ամբողջ աշխատութիւնը շարադրուել-գրուել են 1985-1990 թուականներին, երբ Մարքսիստական գրականագիտութեան այլամերժ, անհաշտ տեսութիւնից և դաժանագոյն գրաֆննութիւնից մնացել էին լոկ տխուր յիշողութիւններ: Ուստի, միանգամայն հասկանալի են Ս. Մանուկեանի «նորովի ընթերցել» փոխաբերական արտայայտութեան միտք բանին: Այդ նշանակում է «ընկերվարութեան թշնամի», «հայ պարծուագիայի խնկարկու» և «Ընկեր Բ. Փանջունի» «Գաղափարագուրկ» գրքի հեղինակ Ե. Օտեանի վաստակը ֆննել-գնահատել նոր ժամանակների ոգով՝ անմախապաշար ու ազատ:

- - -

«Ծիծաղի համար ծնուած մարդը» բաժինը մեծագրութեան առաջին գլուխն է, մի գեղաշէն շփադուռ, որով գրականագէտը ընթերցողին տանում է 19րդ դարակէսի Օտեան մեծահամբաւ տոհմի աշխարհը, ազգային ու պետական բարձր դիրքի ու պաշտօնների, ապարանքների ու փարթամութեան, մեծագին բարեգործութիւնների, սեփական թատրոնի, արուեստի, գիտութեան, գրականութեան ու դպրութեան աշխարհը: Այստեղ ծանօթանում ենք տոհմի երեք սերունդների ներկայացուցիչների հետ, որոնք՝ հիւպատոսներ, պետական խորհրդական, արքունի նարտարապետ, ազգային երեսփոխան, գրող, հրապարակախօս, թարգմանիչ ու մանկավարժ,

անձնական-բարեկամական կապեր ու նամակագրություն էին պահում Վ. Հիւկոյի, Լամարթինի, Մ. Նալպանդեանի եւ շատ ուրիշ նշանավոր գրողների ու մտաւորականների հետ:

Ահա՛ հայեցի ու մտաւորական բարձրակարգ միջավայրը, ուր սնունդ ու ձեւաւորում է Նրուանդ Օտեան մարդը, հայը, մտաւորականն ու գրողը: Ա. Շիրվանզադէն իրաւացի է, երբ նրանով հիացած՝ գրում է. «Ես չեմ տեսել մի հայ գրող, որի հետ այնքան հաճելի եւ ուսանելի լինէր գրականութեան մասին խօսելն ու վիճաբանելը, որքան Նրուանդ Օտեանի հետ: (8): Գեղարուեստական գրականութեան վերաբերմամբ նրա պաշտարն անսպառ էր»:

Ապա՛ Ս. Մանուկեանը ընթերցողին ներկայացնում է Ե. Օտեանի մոտիւր մամուլի ու գրականութեան ասպարէզ, Պոլսոյ «Հայրենիք» թերթում 1992ին տպուած «Սիրոյ նահատակ» երգիծական պատմութեամբ: Այնուհետեւ եւ զարմանալի արագ յաջորդականութեամբ լոյս են տեսնում նրա նորանոր պատմութեանքները, Բրոնիկները, Փէլիէթօնները: Իսկ քառացիօրէն երեք տարի անց, 1895ից «Հայրենիքում» լոյս աշխարհ է գալիս «Գործ եփող Կինը» կամ «Միջնորդ Տէր Պապա»ն, իր հասուն ու շատ կարդացուած երգիծավեպերից մէկը:

Մենագրութեան երկրորդ՝ «Տասներկու տարի տարագրութեան մէջ» Գլուխը գրականագէտը յատկացրել է Ե. Օտեանի կեանքի 1896-1909 տարիների ողբասականի՝ քաղաքական տագնապալի իրադարձութիւնների հարկադրանքով Պոլսից նրա փախուստի, երկրից երկիր

թափառումների եւ այդ ամէնով պայմանաւորուած նրա լրագրային ու գրական գործունէութեան բննարկմանը:

Արդարեւ, 1896-1909 տարիները քաղաքական ցնցող իրադարձութիւնների, տարբեր կուսակցութիւնների եւ հասարակական հակադիր հոսանքների, գաղափարական կրճատ բախումների ժամանակաշրջան էր, որի առաջադրած խնդիրների մէջ չափազանց դժուար էր ճիշտ կողմնորոշուելը: Սակայն, քաղաքական բարդ, հակասական եւ անկայուն այդ իրադրութեան մէջ եւ թափառական կեանքի մշտապէս անապահով վիճակում անգամ, Ե. Օտեանի դիրքորոշումը մնաց սկզբունքային ու շիտակ, հաւաստում է գրականագէտը եւ մէջքերում «Ազատ Խօսք» երգիծաթերթում տպագրուած նրա հետեւեալ տողերը. «Մենք մեր գոհացումը պիտի փնտռենք ծաղրելով կամ ձաղկելով, մեր օրուայ տրամադրութեանը համեմատ, կեղծ փրկիչները, սուտին հարտաբապտները, գողցուած համբաւները, հաշուող խանդավառները, անկեղծութեան անպարարները, հայրենասիրութեան ձեռնածուները, ու կ'անխնայեմք՝ «այլովն հանդերձ», որպէս զի մէկուն խաթրը չմնայ»:

Շարադրանքի շարունակութեան մէջ ընթերցողը տեղեկանում է, որ Ե. Օտեանը վերոյիշեալ տարիներին հիմնել, խմբագրել հրատարակել է «Միութիւն», «Ազատ Խօսք», «Ազատ Բեմ», «Օրէնք», «Կրակ», «Թերթիկ», «Արեւ», պարբերականները եւ «Զանշտական տարեցոյց», զուգահեռաբար ստեղծելով բազում գրական մնայուն արժէքներ, ինչպիսիք են «Յեղափոխութեան

(8) Ասուածից ելնելով, պէտք է ենթադրել, որ Շիրվանզադէն առիթը չի ունեցել «խօսել-վիճելու» Ինտրայի, Վ. Թէլեւեանի, Մ. Շամտանեանի, Ա. Զօպանեանի, Տ. Կամսարականի եւ այլոց հետ:

մակարոյժները» պատմութեան հիմնալի շարքը, «Պրոպականտիստը», «Գործի Մարդիկ», «Վրէժը», «Ազգային բարերարը», «Միֆէի Սիրարկածները» երգիծական վէպերն ու վիպակները, «Զաւալլըն» կատակախաղ, եւ «Զարշըլը Արթին Աղայ» կամ «Ֆրանֆո-թրֆական պատերազմը» նշանաւոր կատակերգութիւնը Միֆայէ Կիւրենեանի հեղինակացութեամբ, ինչպէս նաեւ բազում, բազմաբնոյթ ֆրոնիկներ, երգիծական պատմութեան, Փէլիէթօններ, տոմսակներ, նովելներ, որոնք օրը-օրին լոյս էին տեսնում իր կամ այլոց խմբագրած թերթերում:

Մեմագրութեան ամբողջ ծաւալի ուղիղ կէտն զբաղեցրած «Վերստին Պոլսում, հասուն տարիքի հզօր փայլատակումներ» Գլխում, գրականագէտը ընթերցողի առաջ բացում է Ե. Օտեանի կեանքը, գրական ու լրագրական գործունէութեան կարն, բայց զարմանալի բեղմնաւոր քի բերգառատ վեց տարիների (1908-1914) ժամանակաշրջանը, որը իրաւացիօրէն այսպէս է բնութագրելու. «Այդ դիպումական յեղափոխականներին» (իմա՝ Երիտթուրքներին) երգիծաբանը համարում է պետական իշխանութեան մէջ մեծ ռերագործ Սուլթան Համիտին փոխարինած «կարգ մը պատիկ Կարմիր Սուլթաններ»: Այդ նրանք էին, պէտք է քարքարոսաբար իրականացնէին նախապէս ծրագրուած 1915ի հայոց Մեծ եղեռնը: Բայց, մինչ այդ, յատկապէս «հուրիէթի» հռչակումին անմիջապէս յաջորդած ամիսներին, «Զուլումի» երկրում տեղի ունեցան որոշ փոփոխութիւններ. ազատ արձակուեցին քաղաքական բանտարկեալներ, տուն դարձին իրաւունք ստացան քաղաքական ակտիւները, մեղմացաւ գրաքննութիւնը, համեմատաբար քարեմպաստ պայմաններ ստեղծուեցին հոգեւոր, մշակութային կեանքի զարգացման համար: Որոշակի ծաղկում ապրեց հայ հոգեւոր կեանքը եւ մի առանձին

ուժով փայլեց Ե. Օտեանի հասուն, հզօր տաղանդը:

Այս շատ կարն ժամանակում, Ե. Օտեանը իր ուժերով ու մեմմիակ, խմբագրում, «Գրում», հրատարակում է «Խարազան» «Կառափնատ», «Սեւ Կատու», «Մանանայ» եւ «Ումանց տարեցոյցը»: Ինչպէս «Մանանայ»-ի այնպէս էլ միւս թերթերի նակատին կարող էր նշել. «Գրեց՝ Ե. Օտեան»: Այս շրջանին անհամեմատ հասուն եւ առատ է երգիծանքի գրական թերթը. տասը վէպ ու վիպակ, ընդ որում «Ընկեր Բ. Փանջունի», «Ընտանիք, պատիւ, բարոյական», «Պատերազմ եւ խաղաղութիւն», «Թաղականին Կնիկը», «Տասներկու տարի Պոլսէն դուրս», գլուխ գործոցները եւ համաշխարհային գրականութեան գլուխ գործոցներ՝ Դոստոեւսկու «Մեռելներու տան յիշողութիւնները», է. Զոլայի՝ «Արգասաւորութիւն» եւ Լէօ Թոլսթոյի «Յարութիւն»ը եւ «Աննա Կարենինա»-ի քարգմանութիւնները:

Աշխատութեան չորրորդ եւ վերջին գլխում, որ «Մեծ եղեռնի, վերապրումի եւ վերջին տարագրութեան ուղիներում» խօսուն խորագիրն ունի, գրականագէտը հետազօտում է Ե. Օտեանի կեանքի ու գործի 1915-1926 փակման տասնամեակը: Մեծ երգիծաբանի դիպուկ բնորոշումով «Դժոխային Գնացք», որն սկսուելով Պոլսում ձերբակալութեամբ, անցնում է Գոնիա, Պոզանդի, Օսմանիէ, Ըսլահիէ, Սէպիլ, Հալէպ, Համա, Տէր-Զօր չարչարանաց ու մահուան նամբաներով, վերստին հասնում է ծննդավայր Պոլիս, ապա՝ անցնում Թրիփոլի-Լիբանան եւ աւարտում Գահիրէում 1926ին:

Ինչպէս միշտ, վերջին եղբրական այս տասնամեակում եւս, հակառակ ապրած զրկանք-տառապանքներին, երգիծաբանը հոգու արիութիւն եւ ժամանակ է գտնում ստեղծագործելու եւ զբաղուելու

արեւմտահայ մնացորդացի՝ անհամար որբերի ու որբեւայրիների հաւաքման ու պահպանումի հրատապ-դժուար գործերով, քանզի համոզուած հաւատում էր, որ «Յեղը կ'ապրի՝ այդ տաղանդներուն սերմը իր մէջ, ու նորէն հայ հանճարը պիտի ցոյց աւելի շողշողուն, քան երբեք»:

Աշխատութեան ծաւալը չմեծացնելու մտահոգութեամբ, գրականագէտը Ե. Օտեանի այս շրջանի ստեղծագործութիւններից ուսումնասիրութեան համար առանձնացնում է երեք վէպ՝ «Թիւ 17 Խափիէն», «Նոր Հարուստներ», «Հայ տիասորան», եւ նախընտրաբար կենտրոնանում է առաջինի վրայ: Այն՝ հեղինակի մահից 12 տարի անց, 1938ին Գահիրէում հրատարակուած է չորս հատորով «Հայ ազգային քաղաքական վէպ» ենթախորագրով: «Թիւ 17 Խափիէն» ընդգրկում է 1913-1916 տարիների տանկահայ կեանքի իրական-պատմական դէպքերը Թուրքիայում տեղի ունեցող կարեւոր իրադարձութիւնների խորքի վրայ: 'Էպոքը, որոնք իրենց անողորմ դաժանութեամբ ստիպել են Վիպասանին գրելու «Հիմա այդքան քարակը չեն փնտռեր ... հայ սպանները միշտ ալ օրինական է»:

«Հաւաստեմք նորից, որ այն (իմա՝ «Թիւ 17 Խափիէն») հայոց ցեղասպանութեան անմիջապէս նախորդող ու բուն Մեծ Նեղոսի տարիների հայ ժողովրդի կեանքի եւ ոգորումների վաւերական գեղարուեստական պատմութիւնն է», իրաւացիօրէն եզրակացնում է մեկագրութեան հեղինակը:

- - -

Ահա, մօտաւորապէս, բովանդակութիւնը «Նորանդ Օտեան» աշխատութեան, որտեղ զուգահեռաբար քննուել-հետազօտուել է մեծ երգիծաբանի կեանքը, հրապարակասուրբիւնը եւ գեղարուեստական վաստակը, ընդ որում

«Գերագանցօրէն» կարեւորելով եւ գլխաւոր նպատակ յայտարարելով երրորդը:

Հետաքրքրութեամբ կարդալուց եւ գոհունակութեան անկեղծ զգացումով փակելուց յետոյ «Նորանդ Օտեան» ուշագրաւ աշխատութիւնը, որպէս ամփոփում պարտք էմ գգում անել մի քանի կարեւոր հաստատումներ:

Աշխատութեան հեղինակային ծրագիրը լիովին կատարուած է: Համակարգուած, իմաստաբանուած, քննուած-գնահատուած է Ե. Օտեանի աստանդական, խոռվայոյզ կեանքը, սուր, սկզբունքային, արդարութեան ու նշարտութեան խուզարկու հրապարակա-խօսութիւնը եւ քաղաքական, «վիթխարածաւալ» գրական-գեղարուեստական վաստակը: Յարգանքի եւ երախտագիտութեան զգացումով եւ լցուած հեղինակի նկատմամբ, որը քացի նւիրի կուտակման, մշակման, համակարգման 45 տարի տեւած տնայնացան աշխատանքից, հետազօտել, վերլուծել ու գնահատել է Ե. Օտեանի գրչին պատկանող մօտ չորս տասնեակ անուն գեղարուեստական ստեղծագործութիւն, ցոյց տալով նրանց տեղն ու նշանակութիւնը դարաւոր հայ գրականութեան ընդհանուր համակարգում: Գրականագիտական-վերլուծական այդ ակնարկներում Ս. Մանուկեանը արծարծել է քննարկող ստեղծագործութիւններին առնչուող գրական-գեղագիտական, ինչպէս նաեւ քաղաքական-գաղափարական ամենատարբեր խնդիրներ, ի յայտ բերելով գրականութեան պատմաբանի ու տեսաբանի հմտութիւն, խորաքափանցութիւն եւ ազատ մտածողութիւն: Այդ առումով մեկագրութեան փայլուն շատ ակնարկներից յիշենք «Ընկեր Բ. Փանջունի»ն, «Յեղափոխութեան մակարոյթները», «Թիւ 17 Խափիէն» եւ ուրիշներ:

Ս. Մանուկեանի խնդրոյ առարկայ մեկագրութիւնը Օտեանագիտութեան

իւրայատուկ հանրագիտակ է, որում պրպտուած, յայտնաբերուած եւ ի մի է բերուած Օտեանի կեանքին, հրապարակա-  
խօսութեան ու գեղարուեստական ժա-  
ռանգութեանը վերաբերող փաստերի,  
ծանօթութիւնների, վկայութիւնների,  
մատենագիտական նշումների վիթխարա-  
ծաւալ նիւթ ֆաղուած աշխարհով մէկ  
ցրուած հայ մամուլի էջերից: Այն՝  
ապագայ համապարփակ, ամբողջական  
Օտեանագիտութեան համար յուսալի հիմք  
է:

Կարդալ այս գիրքը կը նշանակէ  
վերստին եւ նորովի ընթերցել Ե. Օտեանի  
ողջ ժառանգութիւնը եւ վերապրիլ նրա  
կեանքի ողիսականը:

Անշո՛ւշտ, Օտեանագիտութեան  
վերջին եւ սպառիչ խօսքը չէ «Ե. Օտեան»  
մենագրութիւնը, բայց է ու կը մնայ նրա  
առաջին «նորովի ընթերցուածը», անաչառ  
եւ ծանրակշիռ խօսքը, կամ եթէ կ'ուզէք,  
Օտեանագիտութեան նոր ժամանակա-  
շրջանի սկիզբը մեր գրականագիտութեան  
պատմութեան մէջ:

Այստեղ պէտք է յատուկ ընդգծել  
«Ընկեր Բ. Փանջունի» երգիծավիպակի եւ  
նրա գլխաւոր հերոս փանջունու  
պատմականօրէն առաջին ազատ,  
աննախապաշար մեկնութիւնը ոչ միայն  
հայ, այլեւ համաշխարհային  
գրականութեան արժեքափերով եւ նրա  
ամենանշանաւոր տիպարների՝ Տոմֆիշտի,  
Բիբուիֆի եւ Թարթարէնի առընթեր, իրրեւ  
նրանց հաւասար չորրորդը: «Փանջունիներն  
անպակաս են ամենատարբեր անուններով  
ֆաղափական կուսակցութիւնների,  
ընկերութիւնների, միութիւնների  
շարքերում - գրում է Ս. Մանուկեանը եւ  
շարունակում - Փանջունին ազգային-  
հայկական արմատներ ունեցող միջազգային  
երգիծատիպ է, գեղարուեստական մեծ  
ընդհանրացում, որի կերպարն ստեղծելիս  
Նրուանդ Օտեանն ընթացել է Սէրվատեսի,  
Սվիֆտի, Մոլիերի, Սալտիկով-Շչեքերինի,

Ա. Դոդէի, Յ. Պարոնեանի ֆանապարհով-  
միաժամանակ պահպանելով իր մեծ  
անհատականութիւնը, եւ նոր ու թարմ  
խօսք ասելով համաշխարհային երգի-  
ծական գրականութեան մէջ»:

Ս. Մանուկեանը խոստովանում է,  
որ մենագրութեան մէջ յատուկ գուլիս չի  
յատկացրել Օտեանագիտութեան  
տեսութեանը, սակայն Օտեանի առանձին  
ստեղծագործութիւնները վերլուծելիս, ըստ  
տեղի եւ անհրաժեշտութեան, անդրադարձել  
է այդ հարցին եւ կարեւոր նշումներ  
կատարել ոչ ճիշտ, կամայական կամ  
պարագայական այն միտք ու միտումներին,  
որ տարբեր առիթներով արտայայտել են  
անուանի հայ գրողներ ու մտաւորականներ,  
ինչպէս՝ Յ. Օշականը, Վահրամ  
Փափագեանը, Ա. Մակարեանը եւ այլք:  
Զծաւալուելու մտահոգութեամբ,  
անդրադառնամ դրանցից մէկին միայն:

Յայտնի գրականագէտ եւ  
Օտեանագէտ Անուշաւան Մակարեանը Ե.  
Օտեանին նուիրուած իր աշխատութիւն-  
ներից մէկում, Պարոնեան-Օտեան  
համեմատութեան մասին խօսելիս, գրում  
է. «Պարոնեանը մեր առաջին մեծ երգի-  
ծաբանն է, Օտեանը՝ ամենամեծ երգի-  
ծաբանը»: Ասում են, որ անգամ լաւ  
համեմատութիւնը կաղում է մէկ ոտով.  
իսկ, այստեղ, Ա. Մակարեանի համեմատ  
կաղում է երկու ոտով: Եթէ համառօտեմք  
բանածել, կը ստացուի մի այսպիսի  
համեմատական պատկեր. «Պարոնեանը  
մեր երգիծաբան, Օտեանը՝ ամենամեծ  
երգիծաբան»: Ըստ ամենայնի  
չմտածուած, չհիմնաւորուած անարդար  
բանածել, որը ամենայն իրաւամբ  
մերժել-հերքել է Ս. Մանուկեանը: Նա այն  
կարծիքին է, որ Պարոնեանը եւ Օտեանը,  
իրարայաջորդ եւ հաւասարարժէք մե-  
ծութիւններ են: Մենք այս տեսակետին ենք  
համաձայն: Ս. մանուկեանը իր  
մենագրութեան մէջ Ե. Օտեանի կեանքն ու  
գործը նման ապակողմնորոշ սխալներից

իւրայատուկ հանրագիտակ է, որում պրպտուած, յայտնաբերուած եւ ի մի է բերուած Օտեանի կեանքին, հրապարակա- խօսութեան ու գեղարուեստական ժա- ռանգութեանը վերաբերող փաստերի, ծանօթութիւնների, վկայութիւնների, մատենագիտական նշումների վիթխարա- ծաւալ նիւթ փաղուած աշխարհով մէկ ցրուած հայ մամուլի էջերից: Այն՝ ապագայ համապարփակ, ամբողջական Օտեանագիտութեան համար յուսալի հիմք է:

Կարդալ այս գիրքը կը նշանակէ վերստին եւ նորովի ընթերցել Ե. Օտեանի ողջ ժառանգութիւնը եւ վերապրիլ նրա կեանքի ողիսականը:

Անշո՛ւշտ, Օտեանագիտութեան վերջին եւ սպառիչ խօսքը չէ «Ե. Օտեան» մենագրութիւնը, բայց է ու կը մնայ նրա առաջին «նորովի ընթերցուածը», անաչառ եւ ծանրակշիռ խօսքը, կամ եթէ կ'ուզէք, Օտեանագիտութեան նոր ժամանակա- շրջանի սկիզբը մեր գրականագիտութեան պատմութեան մէջ:

Այստեղ պէտք է յատուկ ընդգծել «Ընկեր Բ. Փանջունի» երգիծավիպակի եւ նրա գլխաւոր հերոս փանջունու պատմականօրէն առաջին ազատ, աննախապաշար մեկնութիւնը ոչ միայն հայ, այլեւ համաշխարհային գրականութեան արժեքափերով եւ նրա ամենանշանաւոր տիպարների՝ Տոմֆիշոտի, Բիւրիւիի եւ Թարթարէնի առընթեր, իբրեւ նրանց հաւասար չորրորդը: «Փանջունիներն անպակաս են ամենատարբեր անուններով փաղափական կուսակցութիւնների, ընկերութիւնների, միութիւնների շարքերում - գրում է Ս. Մանուկեանը եւ շարունակում - Փանջունին ազգային- հայկական արմատներ ունեցող միջազգային երգիծատիպ է, գեղարուեստական մեծ ընդհանրացում, որի կերպարն ստեղծելիս Երուանդ Օտեանն ընթացել է Սէրվատեսի, Սվիֆտի, Մոլիերի, Սալտիկով-Շչեդրինի,

Ա. Դոդէի, Յ. Պարոնեանի ճանապարհով. միաժամանակ պահպանելով իր մեծ անհատականութիւնը, եւ նոր ու թարմ խօսք ասելով համաշխարհային երգի- ծական գրականութեան մէջ»:

Ս. Մանուկեանը խոստովանում է, որ մենագրութեան մէջ յատուկ գլուխ չի յատկացրել Օտեանագիտութեան տեսութեանը, սակայն Օտեանի առանձին ստեղծագործութիւնները վերլուծելիս, ըստ տեղի եւ անհրաժեշտութեան, անդրադարձել է այդ հարցին եւ կարեւոր նշումներ կատարել ոչ միշտ, կամայական կամ պարագայական այն միտք ու միտումներին, որ տարբեր առիթներով արտայայտել են անուանի հայ գրողներ ու մտաւորականներ, ինչպէս՝ Յ. Օշականը, Վահրամ Փափագեանը, Ա. Մակարեանը եւ այլք: Զծաւալուելու մտահոգութեամբ, անդրադառնամ դրանցից մէկին միայն:

Յայտնի գրականագէտ եւ Օտեանագէտ Անուշաւան Մակարեանը Ե. Օտեանին նուիրուած իր աշխատութիւն- ներից մէկում, Պարոնեան-Օտեան համեմատութեան մասին խօսելիս, գրում է. «Պարոնեանը մեր առաջին մեծ երգի- ծարանն է, Օտեանը՝ ամենամեծ երգի- ծարանը»: Ասում են, որ անգամ լաւ համեմատութիւնը կաղում է մէկ ոտքով. իսկ, այստեղ, Ա. Մակարեանի համեմատ կաղում է երկու ոտքով: Եթէ համառօտեմք բանաձեւը, կը ստացուի մի այսպիսի համեմատական պատկեր. «Պարոնեանը մեր երգիծարան, Օտեանը՝ ամենամեծ երգիծարան»: Ըստ ամենայնի չմտածուած, չհիմնաւորուած անարդար բանաձեւ, որը ամենայն իրաւամբ մերժել-հերքել է Ս. Մանուկեանը: Նա այն կարծիքին է, որ Պարոնեանը եւ Օտեանը, իրարայաջորդ եւ հաւասարարժէք մե- ծութիւններ են: Մենք այս տեսակետին ենք համաձայն: Ս. մանուկեանը իր մենագրութեան մէջ Ե. Օտեանի կեանքն ու գործը նման ապակողմնորոշ սխալներից

ու կամայականութիւններից պաշտպանելու շատ օրինակներ է տուել: Սա գրախօսուող աշխատութեան արժանիքներից է եւ Ս. Մանուկեանի հերթական բարի ծանայութիւնը հայ գրականագիտութեանը:

Պէտք է չմոռանալ մեծագրութեան քննադատական արժեքի մասին: Թող գարմալի չթուայ, եթէ ասեմ, որ քննարկուող այս գիրքը թրքահայոց 1890-1920-ական թուականների իւրատեսակ պատմութիւնն է մասն, հիւսուած՝ Օտեանի ալեկոծ կեանքի, ճշմարտապատում հրապարակախօսութեան եւ խորապէս իմնատիպ եւ մեծարժէք գեղարուեստական ժառանգութեան իրողութիւնների փաստերի համադրումով: Այն գիտականների համար, որ կ'ուզեն ուսումնասիրել այս ժամանակահատուածի գրական, քաղաքական կամ ազգային-ընկերային կեանքին վերաբերող խնդիրներ, Ս. Մանուկեանի սոյն մեծագրութիւնը հարուստ եւ մեծապէս վստահելի աղբիւր է:

Աւելորդ չեմ համարում նշել մասն, որ «Երուանդ Օտեան» աշխատութիւնը շարադրուած է պարզ, մատչելի ռոճով եւ գրական հիւրեղ, արտայայտիչ հայերէնով, որ շատ հեռու է ինչպէս խրթնաբանութիւնից, այնպէս էլ անհարկի օտարաբանութիւններից: Զուտ գիտական գործ, որը, սակայն, շնորհիւ իր յիշեալ եւ այլ արժանիքների, գրասէրները պիտի կարդան հաճոյքով ու հետաքրքրութեամբ:

Այն ամենով, ինչի մասին գրեցիմք, Ս. Մանուկեանը կատարել է «Երուանդ Օտեան» աշխատութեան ծրագիրը, ինչպէս մասն իրականացրել իր հիմնական նպատակը, այն է «նորովի ընթերցել եւ գիտական անաչառութեամբ քննել-գնահատել Ե. Օտեանի գեղարուեստական վաստակը» եւ, վերջապէս, հասել իր «նպատակին», այսինքն՝ «Գիտականօրէն հիմնաւորել այն ճշմարտութիւնը, որ Ե. Օտեանը Յ. Պարոնեանի արժանի,

չգերազանցուած յաջորդն է»: Ապա՝ գրքի վերջում գետեղած «Երկու Խօսք»ում Ս. Մանուկեանը տալիս է համեստութեան իրաւ ու անկեղծ օրինակ, կրկնելով լատինական յայտնի առածը. «Ես արի այն ամէնը, ինչ կարող էի, աւելի լաւը թող անեն նրանք, ովքեր կարող են»:

Լատինական հին առածով ասուածին կը պատասխանենք այսօրուայ մեր կենդանի խօսքով, որ անկեղծ է ու ճշմարիտ: Մեծարգոյ Պրն. Ս. Մանուկեան, անշուշտ, կը գտնուէր եւ «աւելի լաւ» կ'անեն, ինչպէս եկաւ գիտականների ձեռք բերունդը եւ իր նախորդի համեմատութեամբ արեւ «աւելի լաւը»: Կեանքի անյեղի, օրինակաւ ընթացք է: Սակայն, մենք գիտեմք մասն այն, որ նորերը «աւելի լաւ» անելու համար պիտի յենուեն ձեռք արածի վրայ, պիտի առաջ ընթանան ձեռք բացած արահետով: Իսկ դուք, անձնապէս, ձեռք գիտական բազում աշխատութիւններով եւ յատկապէս «Երուանդ Օտեան» մեծագրութեամբ հարստացրել էք Օտեանագիտութիւնը եւ լայնացրել-լուսաւորել նրա քննադատական դէպի առաւել համապարփակ, առաւել սպառիչ գիտական աշխատութիւններ ստեղծելու հնարաւորութիւնը:

Վերջում ուզում եմ ասել-կրկնել, թէ գրուած-աւարտուած, սակայն հեղինակների աշխատասեղանի գգրոցներում կամ հրատարակչութիւնների դարակներում փակուած-մնացած գիրքը, գուցէ եւ մի իսկական գլուխգործոց, դեռ ազգային-մշակութային արժէք չէ. այն այդպիսին կը դառնայ, երբ բազմացուի տպագրութեամբ եւ հասնի ընթերցող զանգուածներին: Գրասէր բարեբար Յարութիւն Սիմոնեանը իր հովանաւորած թուով այս գրքով նորից ապացուցեց վերոյիշեալ ճշմարտութիւնը: Նրա յօժարակամ հովանաւորութեան շնորհիւ «Երուանդ Օտեան» աշխատութիւնը արդէն դարձաւ ազգային-մշակութային արժէք: